բիզ-քիրուն ականջ չէնը, մէկ լիւր[1]) կ'տեսնայ, կ'սպանը, մէկ լը-պըստրակ[2]) կ'տեսնայ, կ'զարկը, կ'սպանը. ականջ չէնի փէրիզ-քիրուն։ Փէրիզ-քիր Ճամբէսի խիտ կ'քէլին, էդիկ Ճամբէսէն տիւս կ'քէլը։

Շատ էկան, քիչ էկան, Մուրադ—ջիւրու բերան խասան. էն-դեղ կանգնան էրկու փէրիզ վըր[3]) Բաթմանայ կարմնջին. Դաւիթ յիտիւանց էկաւ, խասաւ. խասաւ, տեսաւ, որ էրկու փէրիզ վեար կարմնջին դադրած ին։

Դաւիթ էսաց.—Տիւք ի՞նչ աբով էդա տեղ դադրիր էք։

Էսաց.—Խուգիւդ արևուդ կուրբան կ'ըլնինք, տիւ էրեխայ իս, վախենանք մէկ բեալէ մ' կեայ, յեռջիւ զքի կ'ընցրցինք։

Էսաց.—Ջանմ, տիւ կանգնիր էք ընձը կ'թալէք գիտ (տղէն յիմաստուն էր, յիմացաւ)։

Տղէն էսաց.—Տիւ քէլըցէք, զկարմունջ ընցէք, իս յիտիւ տը կեամ։

Ասին.—Զէ, մէկ ընցնը, մէկ կենայ յիտիւ, որ տիւ չ'վա-խանաս։

Էսաց.—Որ անցկուն ի, թըխ ձե խօսք ըլնը։

Ինչ Դաւիթ խասաւ կէս կարմնջին, յառաջ մարդ դարձաւ վերայ, յըտին մարդն էլ խասաւ. ձեռ թալիցին Դաւիթին, զԴա-ւիթ տը զինին[4]) թալին գիտ։

Դաւիթ մէկ ձեռն էթալ, մէկ փէրիզ բռնից, մէկն էլ զմէկ բռնից. բըռնից, իտի կարմնջի վերայ, ձեռ էտու ջերէն տանակ էխան, էրկուսն էլ տը զինէր։

Էն մէկն էսաց.—Իս որ կամ, քիւ խօր դեաստախանը[5]) վե-ըայ իմ ճիւչացը[6]), քիւ խօր խացն իմ կիրի։

Էն մէկէլ էսաց.—Իս որ կամ, իմ սոյ[7]) արաբ ը, իս Մսրա-մելիքի խօր յըռջիւու մարդն իմ. Մսրամելիք զինք ուր բերնով էսաց.—Տարէք էնդեղ զինէք, թալէք գիտ։

---

[1]) Լոր, թռչուն է։ [2]) Նապաստակ։ [3]) Վերայ։ [4]) Զինել, սպանել։ [5]) Սփռոց, սեղան։ [6]) Մեծացել [7]) Ցեղ, տոհմ։